Արձանագրություն N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով թիվ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/2Փ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

«14» «փետրվարի» 2023թ.
Ժամը՝ 12:00

ք. Երևան

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) — Հ. Սեդրակյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Ա. Ավագյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Լ. Զաքարյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Մ.Բեկչյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Մ.Մալխասյան
5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀՄ) — Ա.Բաղալյան

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/2Փ ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/2Փ** ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2023 թվականի փետրվարի 14-ին, ժամը 12:00-ին:**

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները /գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը /ՀՀ դրամ/
1	Սևանի տրանսպորտային հանգույցի հիմնանորոգման աշխատանքներ	1 700 000
	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ68+000 կմ69+000 հատվածում փլուզված հողային պաստառի շեպի վերականգնման աշխատանքներ	
	Հ-53, /Մ-4/ - Սեմյոնովկա - /Մ-4/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+100 հատվածի կամրջի հիմնանորոգման աշխատանքներ	
	/Մ-4/ - Սևանի թերակղզի հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ1+400 կմ1+500 հատվածում փլուզված հողային պաստառի շեպի վերականգնման աշխատանքներ	

2	Մ-5, Երևան - Արմավիր - Թուրքիայի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի հարևանությամբ գտնվող Պտղունք գյուղի միջնակարգ դպրոցի հատվածում վերգետնյա հետիոտնային անցումի կառուցման աշխատանքներ	912 500
	Մ- 3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ105+500-ում գտնվող կամուրջի հիմնանորոգման աշխատանքներ	

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3 .1 Հայտ է ներկայացվել հետևյալ մասնակցի կողմից.

N	Մասնակիցների անվանումները	էլ.փոստ
1	«ՎԻՌԱՄ» ՍՊԸ	viram21@mail.ru

4. Տեղեկատվություն մասնակցի առաջարկած գնի վերաբերյալ

Չափաբաժին 1 փորձաքննության ծառայություններ

Հ/h	մասնակիցների անվանումները	գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր
1	«ՎԻՌԱՄ» ՍՊԸ	1 020 000	-	1 020 000

Չափաբաժին 2 փորձաքննության ծառայություններ

Հ/h	մասնակիցների անվանումները	գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր
1	«ՎԻՌԱՄ» ՍՊԸ	912 500	-	912 500

5. Տեղեկատվություն՝ կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

5.1 Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

6. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

7. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/2Փ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

7.1 Մերժել «ՎԻՌԱՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, այն է

հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

7.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված **ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2023/2Փ** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

7.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Հ. Սեդրակյան** .....

Հանձնաժողովի անդամներ՝ **Ա. Ավագյան** .....

Լ. Զաքարյան .....

Մ. Բեկչյան .....

Մ. Մալխասյան .....

Քարտուղար՝ **Ա. Բաղալյան** .....